

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ ՌՈՒԲԵՆԻ

ՀՈՐԴՈՐԻ ԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
(հայերենի զուգադրությամբ)

Ժ. 02. 07. «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Ք., պրոֆ. Ե.Ս. Մխիթարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Բ.Գ.Ղ., դոց. Ա.Ա. Սիմոնյան
Բ.Գ.Ք., դոց. Կ.Ա. Վելյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. մայիսի 10-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ ԵՊՂ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2013թ. ապրիլի 9-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Ղ., պրոֆեսոր՝

Ե.Լ. Երզնկյան

ՆԱԽԱԲԱՆ

Նախադասությունը՝ որպես լեզվական միավոր, կատարում է մտքի ձևակերպման գործառնություն, ինչն էլ իր հերթին ապահովում է խոսքային հաղորդակցության իրականացումը:

Երկար ժամանակ լեզուն դիտվում էր որպես խոսողներից անկախ մի համակարգ: Գիտնականները հակված էին ուսումնասիրելու լեզվի ձևաբանական կազմակերպումը՝ անտեսելով մարդու կողմից լեզվի կիրառման խնդիրները: Թերևս սա էր պատճառը, որ հորդորական բնույթի նախադասությունները՝ որպես առանձին հաղորդակցական տեսակ, չէին գրավել նրանց ուշադրությունը:

Սակայն, նախորդ դարի կեսերից սկսած լեզվաբանների կողմից հատուկ կարևորություն տրվեց այն կանոններին, որոնք պետք է ապահովեն խոսակցական գործընթաց:

Խոսքային շփման ժամանակ ամեն մի նախադասություն ընկալվում է որպես ընդհանուր հաղորդակցային հոսքում ընդգրկված մի տարր, որի մեջ առկա է խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ, ինչն էլ հիմք է հանդիսանում ենթադրելու, որ հորդորական բնույթի նախադասությունները իմաստա-գործաբանական հատկություններով սերտորեն կապված են հաղորդակցական իրավիճակի հետ:

Յայտնի է, որ հորդորական նախադասությունները՝ որպես հաղորդակցական համակարգում գործածվող արդյունավետ միջոց, ընդգրկված են մարդկային գործունեության տարբեր ոլորտներում, սակայն հատկապես իմաստաբանական և գործաբանական տեսանկյունից սակավ են ուսումնասիրված ինչպես անգլիական, այնպես էլ հայ լեզվաբանության մեջ, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության արդիականությունը:

Թեմայի նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել հորդորի կարգի արտահայտման կառուցվածքային և գործաբանական հայեցակերպերն անգլերենում՝ հայերենի զուգահորությամբ: Սույն նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Լուսաբանել և մեկնաբանել հորդորի կարգի եռությունը:
- Տարանջատել իրամայական նախադասությունները հորդորական նախադասություններից:
- Կատարել հորդորական նախադասությունների ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
- Ուսումնասիրել հորդոր արտահայտող կառույցների այլընտրանքային ոլորտը:
- Բացահայտել հորդորական կառույցների դրսևորման արտակա և ներակա ձևերը:
- Կատարել հորդոր արտահայտող կառույցների գործաբանական վերլուծություն:
- Քննել հորդոր արտահայտող այն կառույցները, որոնցում բայը բացակայում է:

- Կատարել անգլերենի և հայերենի հորդորական կառույցների զուգադրական վերլուծություն՝ կառուցվածքախմաստաբանական և հաղորդակցագործաբանական տեսանկյունից:
- Ի հայտ բերել դրանց միջև եղած զուգամետ և տարամետ հատկանիշները:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ է կատարվում հորդորի կարգի դրսևորման համակարգային ուսումնասիրություն անգլերենում, ինչպես նաև հորդորի կարգի զուգադրական վերլուծություն անգլերենում և հայերենում՝ ի հայտ բերելով դրանց զուգամետ և տարամետ հատկանիշները: Առաջարկվում է ներմուծել «հորդորական նախադասություն» հասկացությունը որպես նախադասության հաղորդակցական առանձին տեսակ՝ հրամայական, հարցական, պատմողական և բացականչական նախադասությունների հետ մեկտեղ:

Ուսումնասիրության տեսական արժեքը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքի մեջ հորդորի կարգն ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում ստացել է ինքնուրույն քերականական կարգավիճակ իր բոլոր կառուցվածքաձևաբանական և հաղորդակցագործաբանական դրսևորումներով՝ ընդլայնելով քերականական-իմաստաբանական կարգերի շրջանակները: Անգլերեն և հայերեն լեզուների հիման վրա հորդորի կարգի զուգադրական քննությունը հարստացնում է տիպաբանության ոլորտը նոր տվյալներով:

Աշխատանքի գործնական արժեքը, ուսումնասիրվող նյութը և եզրակացությունները կարող են օգտագործվել տեսական քերականության համապատասխան բաժիններում, ինչպես նաև շարահյուսական իմաստաբանության ոլորտի մեջ: Ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալները կարող են օգտակար լինել անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ժամանակ, քանի որ հորդորի տարբեր ձևերի ճիշտ կիրառումը՝ կախված խոսողի հաղորդակցական մտադրությունից, խոսակցական լեզվում բավականին էական տարր է հանդիսանում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմել են գործառական և գործաբանական լեզվաբանության դրույթները, խոսքային ակտերի տեսությունը, քաղաքավարության սկզբունքը, նախադասության առկայական տրոհման տեսությունը: Ատենախոսությունում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ համակարգային, համատեքստային, հաղորդակցական, զուգադրական և կաղապարման:

Հետազոտության փաստական նյութը վերցված է բրիտանական, ամերիկյան և հայկական գեղարվեստական գրականությունից:

Աշխատանքի կառուցվածքը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (բաժանված ենթագլուխների), եզրակացությունից և օգտագործված գրականության (տեսական և գեղարվեստական) ցանկից:

Ատենախոսության առաջին գլուխը (Հորդորի կարգի քննության տեսական հիմքերը), որը բաղկացած է երեք ենթագլխից, նվիրված է «հորդորի կարգ» հասկացության լուսաբանմանը, դրա առնչությանը «եղանակ» քերականական կարգի հետ, ինչպես նաև հորդորի և հրամանի դրսևորման առանձնահատկությունների բացահայտմանը, հրամայական և հորդորական նախադասությունների տարանջատման տեսական և գործնական հնարավորությունների բացահայտմանը:

Հայտնի է, որ հորդորն իմաստաբանական կարգ է, որն առկա է աշխարհի գրեթե բոլոր լեզուներում, սակայն յուրաքանչյուր լեզվում այն տարբեր կերպ է դրսևորվում:

Ի տարբերություն արտահայտման այլ ձևերի՝ հորդորն անպայմանորեն ենթադրում է հասցեատիրոջ առկայություն և պատասխան գործողություն, ինչն էլ հնարավորություն է ստեղծում այն հեշտությամբ ճանաչելու և ըմբռնելու:

Երբ խոսողը ցանկանում է, որ իր առաջադրած միտքն ի կատար անվի խոսակցի կողմից, ապա գոյություն ունի երկու ելք. առաջինը՝ զուտ հրամանն է ուղղված դիմացինին՝ հրամայական եղանակի միջոցով: Հրամանը պարտադիր առաջադրանք է, որը խոսողը հղում է խոսակցին, որպեսզի վերջինս կատարի այն:

Սակայն գոյություն ունի մեկ այլ եղանակ և՛ միտքը դիմացինին հասցնելու և նրա միջոցով նպատակին հասնելու: Եթե խոսողը մի փոքր ցածր կամ անգամ խնդրողական երանգ գործածի իր տոնայության մեջ, ապա իր նպատակին հասնելու հնարավորություններն անհամեմատ ավելի կմեծանան: Արտահայտման այս ձևն էլ հենց կարելի է անվանել հորդորական, այսինքն՝ հորդորելու, խնդրելու, կոչ անելու միջոցով հասնել բաղձալի արդյունքի:

Թեև հորդորը և հրամանն առանձին իմաստաբանական կարգեր են, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է իրեն բնորոշ իմաստներ, այնուամենայնիվ, նախադասությունները, որոնց միջոցով ներկայացվում են այդ իմաստները, ըստ իրենց շարահյուսական կառուցվածքի գրեթե չեն տարբերվում և երբեմն կարող են նույնիսկ նույնացվել: Ահա թե ինչու առանձնակի կարևորություն է ստանում նախադասությունների վերը նշված տեսակների զանազանումը, ինչպես նաև դրանց բնութագրական ձևակերպումների սահմանումը:

Եվ՝ հրաման, և՛ հորդոր արտահայտող նախադասություններն, ըստ էության, կատարում են խոսողի կամքը կամ թելադրանքը խոսակցին փոխանցելու գործառույթ և իրենց ավանդական կառուցվածքի հիմքում ունեն հրամայական եղանակով կիրառված բայ: Նշված կառուցվածքային և գործառական ընդհանրությունն էլ հենց հիմք է հանդիսանում անգլերենում նմանատիպ նախադասությունները որակելու որպես հրամայական նախադասություններ: Մինչդեռ ակնհայտ է, որ հրամայական բայաձևով արտահայտված ստորոգյալ ունեցող ոչ բոլոր նախադասություններն ունեն հրամայական բնույթ: Կախված արտաբերման հնչերանգից, որի ուժգնությունը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով և նպատակով, հրամայական եղանակի միջոցով կարելի է արտահայտել ոչ միայն խիստ հրաման, կարգադրություն կամ

հրահանգ, այլ նաև մի շարք այլ իմաստներ՝ խնդրանք, խորհուրդ, առաջարկ, հրավեր, նախագգուշացում, արգելք և այլն: Այդպիսի նախադասություններն ունեն անհամեմատ ավելի մեղմ բնույթ և կարող են բնորոշվել որպես քողարկված կամ թույլ հրամաններ, որոնց միջոցով խոսակցին ոչ թե պարտադրում, այլ խնդրում, համոզում, դրդում կամ հորդորում են որևէ գործողություն կատարելու: Նախադասությունների հենց այդ հաղորդակցական տեսակներն էլ կարելի է որակել որպես հորդորական:

Որպես բնութագրական առանձնահատկություն հարկ է նշել, որ հորդոր արտահայտող նախադասություններին բնորոշ է զգացմունքայնությունը և պատահական չէ, որ դրանք արտաբերելիս հատկապես կարևորվում է հնչերանգի դերը: Հրամայական և հորդորական բնույթի նախադասություններում հնչերանգն իրավամբ կարող է համարվել այն գերակշռող և հավաստի գործոնը, որն իր վրա է կրում հիմնական նշանակային բեռը՝ միևնույն շարահյուսական կառուցվածքն ունեցող նախադասությունները տարանջատելիս: Հատկանշական է, որ անգլերենում կտրուկ հրաման արտահայտող նախադասությունը բնութագրվում է իջնող տոնայնությամբ՝ ի հակադրություն քաղաքավարի խնդրանք արտահայտող նախադասության, որը բնութագրվում է բարձրացող կամ իջնող-բարձրացող տոնայնությամբ, մինչդեռ շարահյուսորեն դրանք երկուսն էլ միևնույն կառուցվածքն ունեն:

Երկրորդ գլխում (Հորդորի կարգի արտահայտչամիջոցներն անգլերենում) տրվում է հորդորական նախադասությունների կառուցվածքային-ձևաբանական և հաղորդակցական-գործաբանական դասակարգումը՝ ներառելով հորդորական նախադասությունների դրսևորման ինչպես հիմնական, այնպես էլ այլընտրանքային ձևերը:

Անգլերենը չունի առանձին հորդորական եղանակ, և հորդորի կարգը, որը մեծ մասամբ ունի կամային բնույթ և ծառայում է խոսողի կամքի արտահայտմանը, ներկայացվում է հիմնականում հրամայական եղանակի միջոցով: Սակայն, հիմք ընդունելով այն փաստը, որ հորդորն անգլերենում գտնում է լայնածավալ գործածություն և բազմազան ձևավորում, նպատակահարմար է այն դիտարկել որպես հաղորդակցական նախադասության առանձին տեսակ, այն է՝ հորդորական նախադասություն, որը չունի իր սեփական ձևաբանական արտահայտչամիջոցները:

Կառուցվածքաձևաբանական մակարդակում հորդորական և հրամայական նախադասությունների հիմնական ձևերը նույնանուն են՝ ներկայանալով որպես նպատակաուղղված կամային դրսևորմամբ կառույցներ, որոնցում պարտադիր ընդգրկված է հրամայական եղանակով կիրառված բայաձև: Ընդ որում վերջինս հորդորի կարգի նախատիպային միավորների հետ ձևավորում է հորդորական նախադասության շարահյուսական կենտրոնը: Հորդորական նախադասությունների հիմնական ձևերի կառուցվածքաձևաբանական վերլուծության արդյունքում ձևավորված չափորոշիչների հիման վրա անգլերենում առանձնանուն են նշված նախադասությունների հետևյալ տեսակները.

- Հաստատական`
 - “Come at once to Paris.” (Maugham)
 - “Tell him how sorry I am.” (Conan Doyle)
- Ժխտական`
 - “Don’t cry child, he’ll be good to you.” (Lawrence)
 - “Don’t forget to tell Pedrico the head is his” (Hemingway)
- “Let” օժանդակ բայով`
 - “Let her find out what it’s like. (Lawrence)
 - “Let’s go away. He wants to be alone.” (Saroyan)
- Հուզական-արտահայտչական`
 - “Don’t you dare follow me. Get out.” (Johansen)
 - “Do let her go, Mr. Rochester, if you please.” (Bronte)

Հորդորի արտահայտչամիջոցների ուսումնասիրությունն անգլերենում ցույց է տալիս, որ խոսողը երբեմն գիտակցված կերպով շեղվում է հորդորի նորմատիվային կառույցներից՝ փորձելով հորդոր արտահայտելու համար կիրառել անուղղակի միջոցներ, որոնք խոսակցին կղրղեին անհրաժեշտ եզրահանգման: Այդպիսի միջոցները ժամանակակից խոսակցական լեզվում բավականին գործածական են՝ թեև շարահյուստրեն բոլորովին տարբեր կառույցներ են և միայն հաղորդակցական որոշակի իրավիճակում են ստանձնում հորդոր արտահայտելու գործառույթ, ինչն էլ հենց հիմք է հանդիսանում դրանք ևս ընդգրկելու սույն ուսումնասիրության շրջանակներում՝ որպես հորդոր արտահայտելու այլընտրանքային ձևեր:

Քանի որ խոսքային հաղորդակցման ընթացքում իրականացվող ոչ բոլոր խոսքային ակտերի համար է քերականությունը նախատեսում նախադասությունների առանձին տեսակներ, հետևաբար երբեմն անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի հաղորդակցային մի տեսակը հանդես գա մեկ այլ նախադասության գործառույթներով՝ որպես անուղղակի միջոց: Ընդհանուր առմամբ, հորդոր արտահայտելու այլընտրանքային միջոցները կարելի է բնութագրել որպես արտակա կամ ներակա կամարտահայտմամբ կառույցներ:

Արտակա կամային դրսևորմամբ կառույցներն՝ ի տարբերություն ներակա կամարտահայտմամբ կառույցների, այնուամենայնիվ, իրենց բովանդակությամբ մատնանշում են արտաբերված նախադասության նպատակը (առաջադրվող հորդորի էությունը)՝ թեև ձևակերպված են բոլորովին այլ նախադասության տեսքով, որում բայը ոչ թե իրամայական, այլ սահմանական եղանակով է կիրառված: Այդպիսի նախադասությունների շարքին կարող են դասվել.

- You+modal verb կաղապարների ընդգրկմամբ կառույցները
 - ա) “You must come to Rome! Egypt isn’t big enough for you.”(Steinbeck)
 - բ) “You have to be careful with moving, Gracie.” (Ahern)
 - գ) “You could do this yourself.” (Johansen)

➤ Կատարողական նախադասությունները

ա) “I ask you to pass through life at my side-to be my second self and best earthly companion.” (Bronte)

բ) “But I advise you to take care, Miss Wangel! For you don’t know him rightly yet.” (Ibsen)

Որպես կարևոր նախապայման և բնութագրական չափանիշ կարելի է նշել, որ կատարողական նախադասություններում իլլոկուտիվ գործառույթ իրականացնող ստորոգյալը, խոսողը և հասցեատերը ներկայացված են արտակա ձևով:

Ներակա կամարտահայտմամբ կառույցների կազմում կարելի է ընդգրկել հարցական նախադասությունները (ընդհանուր և մասնավոր հարցերը), ինչպես նաև քողարկված կամարտահայտմամբ կառույցները, որոնք յուրօրինակ ակնարկի ձևով են մատուցում հորդորը՝ գործառական առումով նույնանալով հորդորական նախադասությունների հետ.

Ընդհանուր հարցեր

ա) “Will you turn your face a little to the light?” she said politely.

(Fitzgerald)

բ) “Would you care to step into the back room?” (Steinbeck)

գ) “Can you change the subject?” (Ahern)

դ) “Can’t you ask the ladies to go away.” (Ibsen)

Մասնավոր հարցեր

ա) “Why put an end to sweetness and happiness?” (Hardy)

բ) “How can you say such a thing?” (Ibsen)

գ) “Why not lay off till Monday?” “Can’t. (Steinbeck)

Քողարկված կամարտահայտմամբ կառույցներ

Սրանք կողմնակի բովանդակությամբ պատմողական բնույթի նախադասություններ են, որոնց իլլոկուտիվ իմաստն ամբողջովին պայմանավորված է հաղորդակցային իրավիճակով և հաղորդակցության մասնակիցների նախնական տեղեկացվածությամբ:

Որպես քողարկված կամարտահայտմամբ կառույցներ կարող են բնութագրվել հետևյալ տիպի նախադասությունները.

ա) “You are standing on my foot.”

բ) “You left the door open.”

գ) “There is not enough salt in the soup.”

Ակնհայտ է, որ բերված օրինակների միջոցով ոչ թե փաստի հաստատում է նշվում, այլ ակնարկվում է որոշակի գործողություն կատարելու անհրաժեշտության մասին:

Հայտնի է, որ լեզվի՝ որպես մարդկային հաղորդակցման միջոցի, կարևոր գործառույթը խոսակիցների կողմից միմյանց հնարավորինս ճիշտ ընկալելու ունակությունն է:

Գործնականում մտքի ճիշտ ընկալումը պետք է վերագրել ոչ թե լեզվի կանոններին, այլ մարդկային սթափ մտքի՝ այն է՝ ճիշտ տրամաբանական հետևություն կատարելու հմտությանը, այսինքն՝ ճշգրտորեն կանխատեսելու խոսողի մտադրությունները՝ ըստ նրա արտաբերած մտքերի: Այս տեսանկյունից հատուկ կարևորություն է ստանում գործաբանությունը:

Գործաբանական տեսանկյունից անհերքելի է այն փաստը, որ խոսքային հաղորդակցման ընթացքում, ըստ տվյալ լեզվի արտասանական և քերականական նորմերի արտաբերված յուրաքանչյուր հորդորական բնույթի նախադասություն համարժեքորեն կարող է ընկալվել հասցեատիրոջ կողմից՝ զգալիորեն կախված լինելով տվյալ հաղորդակցական իրավիճակի համատեքստից, արտաբերված հնչերանգից, ինչպես նաև հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերություններից: Թվարկված գործոնները ձևավորում են տվյալ հորդորական նախադասության գործաբանական ներուժը, ինչով էլ հենց պայմանավորված է դրանց տարբերակումը:

Ելնելով այն հանգամանքից, որ լեզվաբանության մեջ չկա միասնական մոտեցում հորդորի գործառական դաշտի ծավալի և արտաքին սահմանների վերաբերյալ, կարելի է վստահորեն ասել, որ այդ սահմանները մինչ օրս հստակեցված չեն, ինչը ենթադրում է, որ հորդորական նախադասությունների հաղորդակցական-գործաբանական դասակարգումը կարող է կամայականորեն տատանվել: Սույն ուսումնասիրության շրջանակներում փորձ է արվել դասակարգել հորդորական նախադասությունները՝ ըստ խոսքային ակտերի երեք տեսակների.

- Հայցող (requestive),
- Ակնարկող (suggestive),
- Թելադրող (prescriptive),

որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կարող է ունենալ տվյալ տեսակին բնորոշ մի շարք նրբերանգային դրսևորումներ:

Հայցող (requestive) խոսքային ակտերի շարքին կարող են դասվել՝

- խնդրանքը (request)
 - “Could you please take my case to the coach station?” I asked him politely.
 - The young man put the case into his cart. (Dickens)
- աղերսանքը (supplication)
 - “Jennie, for heaven's sake don't cry.” (Dreiser)
- հրավերը (invitation)
 - “Sit down and make yourself comfy. Come to see that the old firm's still raking in dividends for you?” (Maugham)

Ակնարկող (suggestive) խոսքային ակտերի շարքին կարող են դասվել.

- խորհուրդը (advice)
 - I advise you to stay as little as possible.” (Cronin)
- առաջարկը (suggestion/offer)
 - “Let's go outside and look at the moonlight on the river.” (Cronin)
- նախազգուշացումը (warning)
 - “Be carefull crossing the street. Can you see all right?” (Saroyan)

Թելադրող (prescriptive) խոսքային ակտերի շարքին դասվում են հորդորի հետևյալ ենթատեսակները.

- կանք - ցանկություն (will-wish)
“I wish you to promise never to accept any offer Mr. Darcy may make to you.” (Austen)
- պահանջ-հարկադրանք (demand-compulsion)
“You must give me time,” said Giulia Lazzari. “I can't think clearly just now. You'll have to wait.” (Maugham)
- զայրույթ -վրդովմունք (anguish-resentment)
“Hush up your mouth, Harry!” she cried angrily. (Fitzgerald)
- սպառնալիք (threat)
“Don't you touch me! Shrills Trish. I'll sue you.” (Kinsella)
- ցուցում-ուղղորդում (direction-guidance)
“Go at once to the overseer of the cametery and ask him why these workmen are digging a grave when no one has died.”
(Maugham)
- դիտողություն-նախատինք (remark, reproach)
“You must not make compliments unless you mean them.”
(Steinbeck)
- արգելում, կանխում (prohibition, prevention)
“Don't mention this nonesence to me again.” (Cronin)
- թույլտվություն (permission)
“Certainly! You can be absent from work tomorrow and the next day, Dr Manson.” (Cronin)
- համոզում-դրդում (suation-abetment)
“Come Darcy,” Bingley had said, “You must dance. There are so many extremely pritty girls in the room. I have never seen too many in one room in my life.” (Austen)
- քաջալերում (encouragement)
“Don't lose your temper, Cary,” said Edna nervously. “It's only a question of showing him how absurd---” (Fitzgerald)
- վստահեցում, հավաստիացում (entrustment, reassurance)
“But you must trust me! I have enough money to help your family and make them comfortable.” (Hardy)

Ավարտելով հորդորի գործաբանական գործառույթների բացահայտումը, որպես բոլոր ենթատեսակներին բնորոշ հատկանիշ հարկ է նշել, որ առկայական տրոհման տեսանկյունից նշված բոլոր ենթատեսակները ներկայացնող նախադասությունների թեման արտակա կամ ներակա ձևով արտահայտված հասցեատերն է, ռեման՝ ամբողջ նախադասությունը:

Երրորդ գլուխը (Բայազուրկ հորդորական կառույցներն անգլերենում) նվիրված է բայազուրկ հորդորական կառույցների ուսումնասիրությանը, դրանց կառուցվածքային-ձևաբանական դասակարգման և հաղորդակցական-գործաբանական հայեցակերպի քննությանը:

Հաղորդակցության ընթացքում խոսակիցները միշտ չէ, որ խոսում են մանրամասն և համզամանալից իմաստ պարունակող արտահայտություններով կամ նախադասություններով: Նրանք երբեմն օգտվում են ավելի կրճատ կառույցներից, այն է՝ ոչ ամբողջական

ճախադասություններից, որոնց շարքին կարելի է դասել բայազուրկ հորդորական կառույցները (verbless imperatives): Ընդ որում պետք է նշել, որ վերջիններս կարող են իմաստավորվել միայն որոշակի համատեքստում կիրառվելիս՝ ուղեկցվելով հորդորին բնորոշ հնչերանգով: Ըստ իրենց կազմում առկա բաղադրիչների քանակի՝ կարելի է առանձնացնել բայազուրկ հորդորական կառույցների հետևյալ տեսակները՝ միաբաղադրիչ, երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ, որոնց «շարահյուսական կենտրոնը» կարող է արտահայտված լինել՝

մակբայով

“Here. I'll show you the way.” (Lady Gregory)

ածականով

“Quiet! Don't talk about it.” (Hardy)

գոյականով

“Silence!” barked the man with the radio. (Segal)

թվականով

Nora took out her purse and asked for two third class singles for Winton. “Thirty-two and ninepence, please.” (Cronin)

դերանունով

“After him, quick.” (Shaw)

Բայազուրկ հորդորական կառույցների թեմայի և ռեմայի տարանջատման ձևական հստակ չափորոշիչների բացակայությամբ պայմանավորված առանձնակի կարևորություն է ստանում հաղորդակցական կենտրոնի առանձնացումը: Այս նպատակով որպես բացառիկ կարևոր գործոն մատնանշվում է հնչերանգը: Որպես հաղորդակցական կենտրոն (ռեմա) կարելի է որակել այն բաղադրիչը, որն իր վրա կրում է տրամաբանական շեշտադրություն, այն է՝ ամենաուժեղ շեշտվածությամբ ընդգծված այն բառերը, որոնք տվյալ արտահայտության մեջ ունեն իմաստային ամենակարևոր նշանակություն՝ անկախ իրենց դիրքից և շարահյուսական գործառույթից:

Չաղորդակցական կենտրոնը (communicative centre = CC) ճախադասության պարտադիր բաղադրիչ է, քանի որ ցանկացած ճախադասություն, անգամ մեկ բառից բաղկացած, ինչ-որ բան է հաղորդում: Չաղորդակցական ծավալիչ տարրերը (communicative periphery element=CPE) բնութագրվում են հնչերանգի նվազ արտահայտվածությամբ և կարող են ընդգրկվել ոչ բոլոր բայազուրկ հորդորական կառույցներում: Պայմանավորված նշված տարրերի առկայությամբ, բայազուրկ հորդորական կառույցները կարելի է բաժանել երկու խմբի՝

- Միայն հաղորդակցական կենտրոն պարունակող ճախադասություններ (CC),
- Չաղորդակցական կենտրոն և ծավալիչ տարրեր պարունակող ճախադասություններ (CC,CPE):

Չաղորդակցական կենտրոն (CC) և ծավալիչ տարրեր (CPE) պարունակող բայազուրկ հորդորական կառույցներն՝ ըստ հաղորդակցական կենտրոնի դիրքի, կարելի է դասակարգել ըստ հետևյալ երեք ենթախմբերի.

- հաղորդակցական կենտրոնի նախադաս դիրքով (CC+CPE)
“Grapes, Blore” (Galsworthy)
- հաղորդակցական կենտրոնի վերջադաս դիրքով (CPE+CC)
“My dear Alec, enough!” (Galsworthy)
- հաղորդակցական կենտրոնի միջադաս դիրքով (CPE+CC+CPE)
“Richard (taking her arm to lift her). Just – her other arm, Sergeant.” (Shaw)

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայագուրկ հորդորական կառույցները՝ որպես միտքը դիմացինին փոխանցելու առավել նատչելի, արագ ու անմիջական միջոցներ, լայն կիրառություն ունեն մարդկային կենսագործունեության տարբեր բնագավառներում: Ընդ որում, ուշագրավ է, որ բայի բացակայությունը չի դարձնում դրանք բովանդակային առունով թերի, այլ հանդիսանում է արդյունավետ միջոց խնայելու լեզվական միջոցները՝ անփոխարինելի դարձնելով դրանց կիրառությունը հատկապես այնպիսի ոլորտներում, երբ որևէ գործողության կատարմանն ուղղված խոսքը պետք է իրականացվի բառերի հատուկ ընտրությամբ, զուցե մեկ բառով՝ ինչպես ռազմական հրամաններում կամ բժշկական վիրահատությունների ժամանակ:

Չորրորդ գլուխը (Անգլերենի և հայերենի հորդորական կառույցների զուգադրական վերլուծություն) նվիրված է անգլերենի և հայերենի հորդորական նախադասությունների զուգադրական վերլուծությանը՝ ինչպես կառուցվածքային և իմաստաբանական, այնպես էլ հաղորդակցական և գործաբանական տեսանկյուններից:

Համեմատական վերլուծության հիմնադիրներից է Շ. Բալլին¹, որը գտնում է, որ համեմատության ժամանակ ի հայտ են գալիս լեզուների բնութագրական գծերը, որոնք թույլ են տալիս հեշտորեն բացահայտելու դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, ինչպես նաև այն ընդհանրությունը, որն առկա է այդ լեզուներում:

Որպես կարևոր ընդհանրական առանձնահատկություն կարելի է նշել, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում հրամայական եղանակի միջոցով արտահայտվում են տարաբնույթ իմաստային նրբերանգներ, որոնք հաճախ շատ հեռու են հրաման լինելուց: Միաժամանակ անհերքելի է, որ երկու լեզուներում էլ հորդորական բնույթի նախադասություններն ունեն արտահայտչամիջոցների լայն շրջանակ, որոնք դուրս են հրամայական եղանակի հարացույցի սահմաններից:

Թեև «հորդորական նախադասություն» հասկացության հստակեցումը ուսումնասիրվող երկու լեզուներում բացահայտում է յուրօրինակ ընկալում, այնուամենայնիվ, նշված տիպի նախադասությունների հիմնական ձևերը այս լեզուներում ներկայանում են հիմնականում հրամայական եղանակի միջոցով: Անգլերենում հորդոր արտահայտելու

¹ Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка. Москва: Издательство иностранной литературы, 1955.

համար բացի հրամայական եղանակից կիրառվում է նաև սահմանական եղանակը: Հայերենի հնարավորություններն այս առումով ավելի լայն են, քանի որ հորդորական կառույցները, բացի հրամայական եղանակից, կարող են արտահայտվել սահմանական, պայմանական, ըղձական, ինչպես նաև հարկադրական եղանակների միջոցով: Օրինակ՝

պայմանական

«Լսիր մորդ, Կրտսեր, Ծօփքուն կմնաս մի քանի օր, կսիրաշահես գավառների նահապետներին և առանց որևէ մեկին հայտնելու, կուղևորվես Տիգրուն»: (Խաչատրյան)

ըղձական

«Թող ների ինձ արքայից-արքան, տերը Հայոց աշխարհի, որ դուստրն իմ փորձել է չափվել այդ քաջարիների հետ և հաղթող դուրս եկել»: (Խաչատրյան)

«Գնանք, մի փոքր էլ կոկորդներս գինով թրջենք», - պատասխանեց մյուսը, և նրանք շուտով հեռացան: (Այվազյան)

«Վախտ ու անվախտ դես-դեն չընկնես, ձեռդ ընկած փողը քռռուփուչ չանես, հազար ու մի պակասություն ունենք»: (Թումանյան)

հարկադրական

«Սիրելի Սամվել, պետք է պատրաստվես հորդ ընդառաջ գնալու»: (Րաֆֆի)

Ի տարբերություն անգլերենի, հայերենը թեքական լեզու է, ինչը ենթադրում է, որ խոնարհված բայն իր մեջ արտացոլում է քերականական բոլոր կարգերը (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ)՝ ձեռք բերելով տարբեր վերջավորություններ և տարբերակիչ դեր խաղալով հորդորական բնույթի նախադասությունների ճանաչման գործում:

Ուշագրավ է, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում հորդորական նախադասությունների ստորոգյալի դերում կարող են կիրառվել կառույցներ, որոնց միջոցով խոսողը հասցեատիրոջը դրդում է որոշակի վարքի կամ վիճակի, այլ ոչ թե գործողության: Ընդ որում անգլերենում այս նպատակով կիրառվում է հրամայական նախադասության “be+adjective/noun/Participle II” վերլուծական ձևը, հայերենում՝ «ածական, գոյական + եղիր (եղեք), կաց (կացեք), մնա (մնացեք)» համադրությունը, որոնք իմաստային առումով կարող են համարվել հոմանիշ կառույցներ: Օրինակ՝

ա) “Now be ready”. (Dunsany)

բ) «Ուրախ կաց, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով»: (Րաֆֆի)

Հայտնի է, որ հորդորական նախադասություններում սովորաբար ենթակայի հիշատակման կարիք չի զգացվում, թերևս բացառությամբ այն դեպքերի, երբ այն անորոշ է: Օրինակ՝

ա) Kate breaks the silence.”OK, so, I still don’t get it. Somebody explain.” (Որևէ մեկդ բացատրեք) (Ahern)

բ) “Everybody enter the room.” (Բոլորը մտեք սենյակ)

Ընդ որում ուշագրավ է, որ “դ” հոդի առկայության շնորհիվ բերված նախադասությունների հայերեն համարժեքները կարող են դիտվել որպես

երկրորդ դեմքին հարող կառույցներ, մինչդեռ անգլերենում դրանք համարվում են երրորդ դեմքին ուղղված կառույցներ:

Յրամայական եղանակով արտահայտված հորդորական նախադասությունների ժխտական ձևերը և՛ անգլերենում, և՛ հայերենում կազմվում են նույն սկզբունքով, այսինքն ժխտական մասնիկների (“not”, «մի») ներմուծմամբ՝ մատնանշելով գործողության դադարեցում, արգելում կամ կանխում: Օրինակ՝

ա) “Don’t stand there like a statue.” (Ibsen)

բ) «Մի ստիպիր նզովել քեզ, - էլ ավելի ինքնավստահ դարձավ Ներսեսը, հրճվելով, որ իր սպառնալիքը ազդեց արքայի վրա:

(Ջեյթունցյան)

Յայերենում սահմանական, ըղձական, պայմանական, ինչպես նաև հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ ունեցող հորդորական նախադասությունների ժխտման նշույթավորումն իրականացվում է բայական անդամին “չ” նախադաս մասնիկի հավելումով, որն՝ իր տարբերություն “մի” արգելականի, իր վրա շեշտ չի կրում: Օրինակ՝

ա) «Չանցնես սահմանը, արքա», - հանկարծ տարօրինակ վճռականությամբ ասաց Գնելը և սպառնալիք ուղիքի ելավ:

(Ջեյթունցյան)

բ) «Թող իմ տերը չտանջե իր սիրտը»: (Րաֆֆի)

Ինչպես արդեն նշվել է, հորդորական նախադասություններին հատուկ է զգացմունքայնությունը, ինչը որպես խոսողի վերաբերմունքը հստակեցնող և ճշգրտորեն մատուցող նկարագիր, առանցքային դեր է կատարում դրանք որակելիս: Ուշագրավ է, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում այդ նկարագիրը երբեմն կարող է իր հաստատուն կառուցվածքային դրսևրումն ունենալ նախադասության կազմում, ինչի արդյունքում էլ այն հեշտորեն ճանաչվում և տարբերվում է մյուսներից: Այս առումով, որպես երկու լեզուներին բնորոշ կառուցվածքային ընդհանրություն, առանձնակի կարևոր տեղ է զբաղեցնում “please” - «խնդրում եմ/խնդրեմ» բառը (քաղաքավարության ցուցիչը): Օրինակ՝

ա) “Pass along, please, up those steps.” (Sladen-Smith)

բ) «խնդրում եմ, Սահակ, մի՛ հիշեցրեք ինձ այդ անունը: (Րաֆֆի)

Անգլերենում առաջին և երրորդ դեմքերին ուղղված հորդոր արտահայտելու համար կիրառվում է “Let smb do smth” կառույցը, որի գործառական դաշտի համեմատումը հայերեն համարժեքների հետ բացահայտում է այն իրողությունը, որ հայերենում ևս կիրառվում են նույնատիպ շարահյուսական կաղապարներ, որոնք թեև դրսևորում են միևնույն իմաստաբանական հատկանիշները, այնուամենայնիվ, ձևաբանական մակարդակում հանդես են բերում որոշակի տարբերություններ: Օրինակ՝

ա) «Թույլ տուր մեզ, տիկին, նետահարել այդ անզգամին... (Րաֆֆի)

բ) «Թող պարթևները տեսնեն, թե ինչպես է Յայքը պատժում հայրենադավին»: (Խաչատրյան)

բ) «Բայց այստեղ շարժվելու տեղ չկա, արի դուրս գանք այս վանդակից, իջևանենք մի բաց տեղ... (Խաչատրյան)

Այլընտրանքային արտահայտչամիջոցների համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենին ևս բնորոշ է այլ տեսակի նախադասությունների միջոցով հորդոր արտահայտելը, ընդ որում այդ նպատակով հայերենում կիրառվում են ինչպես հարցական՝ այնպես էլ պատմողական նախադասություններ, որոնք թեև անմիջականորեն չեն առաջադրում որևէ գործողության կատարում, այնուամենայնիվ, իրենց մեջ ակնարկող կամ ուղղորդող (հուշող) տեղեկատվություն են պարունակում: Օրինակ՝

ա) «Վերջապես թողնելո՞ւ եք աշխատեն»։ (Սարոյան)

բ) «Գուցե կմնա՞ք մեզ մոտ», - առաջարկում է մայրը: (Մկրտչյան)

գ) «Ինչո՞ւ չես գնում այստեղից, թեկուզ միառժամանակ»: (Մոեմ)

դ) «Արքայից-արքա և իմ տեր, ես խնդրում եմ լսել ինձ»:

(Խաչատրյան)

ե) «Օրիորդ, խորհուրդ եմ տալիս քեզ մտածել այդ մասին,- վրատվեց Մեհրունժանը և, չլսելով համառ անտիոքուհու պատասխանը, շտապ դուրս եկավ առանձնասենյակից»:

(Խաչատրյան)

Ներկայման տարրերի շարքում հարկ է նշել նաև քողարկված հորդոր արտահայտող նախադասությունները, որոնց դեպքում հատկապես կարևորվում է նախադասության ճիշտ ընկալումը, ինչն անմիջական առնչություն ունի ճանաչողական ոլորտի հետ: Երկու լեզուներում էլ որպես քողարկված հորդորի օրինակ կարող է դիտվել առաջին հայացքից զուտ պատմողական հնչող "It's noisy in the classroom", («Դասարանում աղմուկ է») նախադասությունը, որն ուղղված է դասի ժամանակ անընդմեջ խոսող աշակերտներին լռեցնելուն: Այն հնարավորություն է տալիս խուսափելու կոպիտ և վիրավորական հնչող "Shut up!" («Լռե՛ք») հրամայական ձևից՝ գործառական առումով հանդիսանալով համարժեք այլընտրանք:

Միակազմ նախադասությունների կիրառումը ևս բավականին ընդունված է հայերենում: Դրանց շարքին են դասվում միակազմ անվանականները և բայական անդեն նախադասությունները, որոնք գործառական առումով համարժեք են անգլերենի բայազուրկ հորդորական կառույցներին: Օրինակ՝

ա) «Դեպի տուն», - հրամայեց նա կառապանին: (Շիրվանզադե)

բ) «Ետ, բոլորդ բակի մեջ...թողեք տեսնենք ովքեր են և ինչ են ուզում մեզնից»: (Փափազյան)

գ) «Չծխել»:

Գործաբանական տարաբնույթ ենթատեսակները լուսաբանող երկու լեզուներով ներկայացված օրինակների համեմատումը թույլ է տալիս հստակորեն արձանագրելու, որ հայերենում ևս հորդորի գործաբանական դրսևորումները ներկայանում են գրեթե միևնույն տարատեսակային կազմով, այն է՝

- **Խնդրանք**
«Ես խնդրում եմ ձեզ, օգնեցեք ինձ, աստվածներիդ հայոց, թույլ տվեք ապրել աշխարհի վրա դեռ այնքան ժամանակ, մինչև վրեժ լուծեմ Լուկուլլոսից, Զոմմից»: (Խաչատրյան)
- **Աղերսանք**
«Չայր, աղաչում եմ, հայտնիր ինձ, ի՞նչ է պատահել նրան, մի՞թե նա պիտի մեռնի», - ասաց Լուսիկը, և արտասուքները հեղեղեցին նրա աչքերից: (Այվազյանց)
- **Չրավեր**
«Չանեցեք, պ. պրոֆեսոր,- առաջ ընկավ Գրիգորը նրա աթոռը ցույց տալու համար»: (Փափազյան)
- **Խորհուրդ**
«Չերիք է տղաս, ետ դարձիր այդ չար ճանապարհից, կզղջաս, ուշ կլինի...» (Մկրտչյան)
- **Առաջարկ**
«Գնանք, գնանք Վահրամ իշխանի մոտ,- կանչեց ամբոխից մի ձայն, - պետք չէ ուշացնել, երկաթը տաք-տաք կծեծեն»:
(Այվազյանց)
- **Նախազգուշացում**
«Զգույշ, քուրմ Զուսիկ, ավելորդ ասված մի բառը կարող է փչացնել ամեն ինչ»:
(Խաչատրյան)
- **Կանք, ցանկություն**
«Գահը թող ժառանգե Աբասը, նա է իմ օրինական ժառանգը»:
(Մուրացյան)
- **Պահանջ, հարկադրանք**
«Այնուամենայնիվ, զավակս, դու պետք է լսես ինձ հենց հիմա և խոստանաս կատարել իմ ցանկությունը»:
(Խաչատրյան)
- **Զայրույթ, վրդովմունք**
«Մայր ասացիր, ինչ որ ուզում էիր ասել: Այժմ թո՛ղ ինձ հանգիստ, թո՛ղ մենակ մտածեմ իմ անելիքի մասին»:
(Շիրվանզադե)
- **Սպառնալիք**
«Ստիպված ես այդպես անել, եթե չանես, կդիմեն դատարան»,- ասաց Միքայելը:
(Շիրվանզադե)
- **Ցուցում, ուղղորդում**
«Մոտ արի Փայլակ, պատմիր առանց շտապելու, մի վառիր կանթեղը, թող պալատում ոչ ոք չիմանա, որ այս պահին ես արթուն եմ»:
(Խաչատրյան)
- **Դիտողություն, նախատիմք**
«Իշխան, լեզվիդ չափ դիր, ճանաչիր, թե դու որտեղ ես գտնվում», - պատասխանեց Վահրամ Իշխանը մինչև ականջները կարմրելով:
(Այվազյանց)
- **Թույլտվություն**
«Դե հիմա կարող ես գնալ, մնացածը ես կանեն», - ժպտաց նա կնոջը և սկսեց փոսի մեջ ուղղել կարասի դիրքը:
(Խաչատրյան)
- **Արգելում, կանխում**
«Մի նեճափոխիր խոսքս, սպարապետ»:
(Զեյթունցյան)

- Համոզում, դրդում
«Լսիր հայր, ընդունիր տառապյալ որդուդ աղաչանքը, մի արատավորիր Մամիկոնյանների պայծառ անունը հավիտենական անոթով: Դեռ ուշ չէ»: (Րաֆֆի)
- Քաջալերում
«Քաջ կացեք, ընկերներ, մի վիատիք,-կանչում էր նա և մի աշտարակից մյուսը թռչում»: (Այվազյանց)
- Վստահեցում, հավաստիացում
«Ձորապետ, քո դատեր գլուխը մի փոքր ցավում էր և, երևի, հիմա անցած կլինի, դու կարող ես բուլորովին հանգիստ լինել»: (Խաչատրյան)

Թերևս հարկ է նկատել, որ հայերենում հորդորի գործաբանական դրսևորումների տարատեսակների շարքը կարող է ընդլայնվել ի հաշիվ նրբերանգային որոշ ենթատեսակների ներմուծման, որոնք անգլերենում այնքան էլ գործածական չեն: Այս առումով հատկապես կարևորում ենք հայերենում «կոչ», «խրատ» և «պատգամ» ենթատեսակների առանձնացումը, որոնք առանձնակի արժեքավոր են, քանի որ իրենց մեջ ազգային մտածողությանը հատուկ խորհուրդ կամ իմաստություն են կրում և բավականին կիրառելի են:

Խրատ

«Ամենից առաջ սիրե՛ք միությունը, դա այն ուժն է, որ լեռներ է պատռում, ամբարտակներ կործանում, գետի ընթացքը կասեցնում»: (Մուրացյան)

Պատգամ

ՈՒ տե՛ս, որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքիցդ հանես,
Քո մայր լեզուն չմոռանա՛ս: (Կապուտիկյան)

Կոչ

«Չեյ, պարոններ, ականջ արեք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,
Լավ ուշ դրեք իմ խաղին»: (Թումանյան)

Անգլերենի և հայերենի հորդորական նախադասությունների հիմնական և այլընտրանքային ձևերի զուգադրական վերլուծության արդյունքում ի հայտ են բերվել զուգամետ և տարամետ մի շարք հատկանիշներ, որոնք էլ փորձենք հաջորդականորեն ներկայացնել:

- Ձուգամետ հատկանիշներ

1. Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում հորդորի կարգը չի դիտվում որպես առանձին քերականական կարգ, հետևաբար հորդորական նախադասությունը չի համարվել որպես հաղորդակցական նախադասության առանձին տեսակ:

2. Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում հորդորական կառույցները ցույց են տալիս մի գործողություն, որը թելադրվում է խոսողի կողմից (առաջին դեմք) խոսակցին (երկրորդ դեմք)՝ դրդելով վերջինիս որոշակի վարքի, վիճակի կամ գործողության, և որոնց համար

որպես առաջնային բնութագրական ձևութաբանական միջոց հանդես է գալիս հրամայական եղանակը:

3. Հորդորական նախադասությունների ենթակաները երկու լեզուներում էլ հիմնականում արտահայտվում են երկրորդ դեմքով՝ ենթադրելով «you»- «դու կամ դուք» զեղչված ձև, որի բառային գործածությունը ավելորդ է դիտվում:

4. Առաջին և երրորդ դեմքերին ուղղված հորդոր արտահայտելու համար կիրառվում են որոշակի շարահատությամբ կառույցներ՝ հանդես բերելով համարժեք իմաստային դրսևորումներ՝ ա) «Let smb do smth» ⇔ «թույլ տուր/տվեք +ենթակա +անորոշ դերբայ» կամ «թող/թողեք+ենթակա+ +ըղձ.եղ.բայ» և բ) «Let's+infinitive» ⇔ «Արի/Եկեք+ըղձ.եղ.բայ»

5. Հրամայական եղանակով արտահայտված հորդորական նախադասությունների ժխտական ձևերը կազմվում են ժխտական մասնիկների ներմուծմամբ, որոնք նախորդում են հիմնական բային՝ մատնանշելով գործողության դադարեցում, արգելում կամ կանխում:

6. Խնդրանք արտահայտելու նպատակով ներմուծվում են փափկեցնող բնույթ ապահովող բառեր՝ քաղաքավարության ցուցիչներ (please, just, now, had better, kindly-խնդրում եմ, ուղղակի, այժմ, բարի եղիր, ավելի լավ կլինի):

7. Խոսքը կարճելու, այն ավելի դիպուկ և նպատակասլաց դարձնելու նպատակով երկու լեզուներում էլ կիրառվում են միակազմ հորդորական կառույցներ (անգլերենում՝ verbless imperatives, հայերենում՝ միակազմ անվանականներ), որոնց կառուցվածքային բնութագիրը գրեթե նույնն է:

8. Գործնականում երկու լեզուներին էլ բնորոշ է հորդոր արտահայտելու նպատակով նաև այլընտրանքային միջոցների կիրառումը, որոնք կարող են ունենալ ինչպես արտակա, այնպես էլ ներակա դրսևորում՝ ներառելով պատմողական և հարցական նախադասություններ:

9. Եվ՝ անգլերենում, և՛ հայերենում ձայնային սմանակությունների օգնությամբ ևս արտահայտում են հորդոր:

10. Ուսումնասիրվող երկու լեզուներում էլ հորդորը ներկայանում է տարբերությամբ կազմով՝ ներառելով խնդրանք, խորհուրդ, նախագգուշացում, հրավեր, պահանջ, նախատինք, սպառնալիք, առաջարկ իրականացնող գործառույթներ:

11. Եվ՝ անգլերենում, և՛ հայերենում հորդորի գործաբանական դրսևորումները ներկայանում են գրեթե միևնույն կազմով, որոնք կարելի է ընդգրկել խոսքային ակտերի երեք խմբերում՝ հայցող (requestive), ակնարկող (suggestive), թելադրող (prescriptive):

➤ Տարամետ հատկանիշներ

Հորդորի արտահայտչամիջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

1. Հայերենը՝ ի տարբերություն անգլերենի, ձևաբանական մակարդակում ավելի լայն հնարավորություններ է հանդես բերում՝

ներկայանալով ոչ միայն հրամայական և սահմանական, այլև ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների միջոցով:

2. Ի տարբերություն անգլերենի, հայերենում խոնարհված բայն իր մեջ արտացոլում է քերականական բոլոր կարգերը (թիվ, դեմք, ժամանակ)՝ ունենալով տարբեր վերջավորություններ և տարբերակիչ դեր խաղալով հորդորական բնույթի նախադասությունների ճանաչման գործում:

3. Անգլերենում ժխտման գործառույթ կարող են իրականացնել նաև ժխտական մակբայը և դերանունները, մինչդեռ հայերենում հորդորական նախադասությունների ժխտական ձևերի նշույթավորումը հնարավոր չէ միայն ժխտական մակբայի կամ ժխտական դերանվան ներմուծմամբ և անպայմանորեն պահանջվում է ստորոգյալի ժխտում:

4. Հայերենում առաջին դեմքի հոգնակի թվով կիրառված ըղձական եղանակի բայածևը կարող է ստանձնել անգլերենի “Let’s+infinitive” կառույցի իրականացրած գործառույթը՝ արտահայտելով համատեղ գործողության առաջարկ կամ հրավեր:

5. Անգլերենում բայազուրկ հորդորական կառույցներում գերունդիումի հաստատական ձևը չի կարող կատարել գերադաս անդամի դեր, հետևաբար այդպիսի կազմով բայազուրկ հորդորական կառույցի ձևավորումը հնարավոր չէ, մինչդեռ հայերենում անորոշ դերբայի հաստատական ձևը կարող է հանդես գալ որպես գերադաս անդամ՝ ձևավորելով բայական անդեմ նախադասություններ, որոնք էլ իրենց հերթին՝ ուղեկցվելով համապատասխան հնչերանգով, կարող են կոչ կամ կարգադրություն արտահայտել:

6. Ի տարբերություն անգլերենում հատուկ և ընդհանուր հարցերի միջոցով ձևավորված նախադասությունների, հայերենը չի պարտադրում համարժեք գործառույթով կոնկրետ (կայուն) կաղապարներով հարցադրումների կիրառում՝ հնարավորություն ընձեռելով շարահյուսորեն ազատորեն մանևրելու:

7. Հայերենում հորդոր-արգելքը կարող է արտահայտվել անորոշ դերբայի ժխտական ձևով, անգլերենում այն կարող է ներկայանալ no+գերունդիում կաղապարով (չժխել- no smoking):

8. Հայերենում գործաբանական դրսևորումների շարքն ավելի ընդգրկում է՝ ի հաշիվ միայն տվյալ լեզվին բնորոշ նրբերանգային որոշ ենթատեսակների (կոչ, խրատ, պատգամ), որոնք անգլերենում՝ որպես առանձին ենթատեսակներ չեն դիտվում, այլ ներգրավվում են գործաբանորեն առավել մոտ ենթատեսակում:

Այսպիսով, ելնելով փաստական նյութի վերլուծության հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքներից, կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- Անգլերենում և հայերենում չկա միասնական մոտեցում հորդորը որպես առանձին քերականափաստաբանական կարգ ճանաչելու հարցի վերաբերյալ, ուստի դրա գործառական դաշտի ծավալն ու արտաքին սահմաններն եղել են անորոշ և վերջնականապես չպարզեցված:

- Անգլերենում և հայերենում հորդորական նախադասությունները սովորաբար նույնացվում են հրամայական նախադասությունների հետ՝

մինևուն կառուցվածքաձևաբանական բնութագիրն ունենալու հիմնավորմամբ, ինչպես նաև պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք երկուսն էլ իրականացնում են խոսակցին որևէ գործողության դրդելու գործառույթ:

- Գորդորն ընկալվում է որպես ավելի լայն հասկացություն՝ ներառելով անուղղակի հրամանի գործառույթ իրականացնող ավելի մեղմ բնույթի նախադասություններ, որոնցում որևէ գործողության դրդելու, կոչ անելու իմաստը կարող է ներկայացված լինել ինչպես հրամայական, այնպես էլ ոչ հրամայական կառույցներով:

- Ելնելով այն հանգամանքից, թե հրաման և հորդոր արտահայտող նախադասություններն իմաստաբանորեն ինչ կերպ են դրսևորվում, ինչպիսի գործաբանական իմաստներ են իրականացնում, դրանք աշխատանքում դիտվում են որպես երկու առանձին տեսակներ, որոնց համար համապատասխանաբար կիրառվել են «հրամայական նախադասություն» և «հորդորական նախադասություն» եզրույթները: Ընդ որում որպես հրամայական որակվում են այն նախադասությունները, որոնցում ստորոգյալն արտահայտված է հրամայական եղանակով և որոնց հիմնական հաղորդակցական գործառույթը հրաման, հրահանգ կամ կարգադրություն արտահայտելն է:

- Գորդորական նախադասությունը չունի ինքնուրույն ձևաբանական ձևակերպում, ուստի չի կարող համարվել կառուցվածքային առումով նախադասության առանձին տեսակ, բայց հաղորդակցական առումով այն կարելի է դիտել որպես նախադասության առանձին տեսակ՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների հետ մեկտեղ:

- Գորդորի կարգն իրականացնող արտահայտչամիջոցներից մեկը հրամայական եղանակն է, որը հանդիսանում է հիմնական ձև: Ընդ որում, հայերենում նույն իմաստաբանական գործառույթը կատարում են նաև պայմանական, ըղձական և հարկադրական եղանակները:

- Գորդոր արտահայտելու համար կիրառվում են անուղղակի ձևեր, որոնք շարահյուսորեն բոլորովին տարբեր կառույցներ են և միայն հաղորդակցային որոշակի իրավիճակում են ստանձնում հորդոր արտահայտելու գործառույթ: Այդպիսի միջոցները սույն ուսումնասիրության շրջանակներում որակվել են որպես հորդոր արտահայտելու այլընդանաբային ձևեր՝ բնութագրվելով որպես արտակա կամ ներակա կամարտահայտմամբ կառույցներ:

- Արտակա դրսևորմամբ կառույցներն՝ ի տարբերություն ներակա կամարտահայտմամբ կառույցների, իրենց բովանդակությամբ մատնանշում են արտաբերված նախադասության նպատակը՝ ներառելով պատմողական, ինչպես նաև եղանակավորող բայերով կառույցներ:

- Որպես ներակա կամարտահայտմամբ կառույցներ կարող են որակվել հուշող կամ ուղղորդող նախադասությունները, որոնք գործառական առումով նույնամուն են հորդորական նախադասությունների հետ և կարող են ունենալ ակնարկող կամ քողարկված բնույթ:

- Ներակա միջոցների շարքում առանձնակի կարևորություն և լայնածավալ գործածություն ունեն հարցական-հորդորական նախադասությունները, որոնց ճանաչման համար որպես կարևոր նախապայման և հիմնական գատորոշիչ գործոն պետք է դիտարկել ոչ թե խոսքային արձագանքը, այլ ակնկալվող գործողության կատարումը:

- Հորդորի այլընտրանքային ոլորտը ներառում է նաև միակզմ հորդորական կառույցները, որոնք առանձնամուսն են որպես հորդորի կարգը ներկայացնող յուրահատուկ և ինքնատիպ արտահայտչամիջոցներ՝ հնարավորություն տալով խոսքը կարճելու, այն ավելի դիպուկ և նպատակասլաց դարձնելու: Նշված կառույցներում բայի բացակայությունը չի դժվարացնում դրանցում հորդորի արտահայտումը և չի դարձնում դրանք բովանդակային առումով թերի: Ըստ կառուցվածքի միակզմ հորդորական կառույցները լինում են՝ միաբաղադրիչ, երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ: Այդպիսի դասակարգումը բնորոշ է թե՛ անգլերենին, թե՛ հայերենին:

- Գործաբանական տեսանկյունից հորդորական կառույցները դրսևորում են տարբերույթ իմաստներ՝ սկսած ամենամեղմ քաղաքավարի խնդրանքից մինչև կտրուկ և վճռական կարգադրություն՝ խնդրանք, աղերսանք, հրավեր, խորհուրդ, առաջարկ, նախագզուշացում, վստահեցում, քաջալերում, համոզում, դրդում, թույլտվություն, արգելք, նախատինք, ուղղորդում, ցուցում, սպառնալիք, զայրույթ, պահանջ, կամք: Հայերենում դրանց թվին ավելանում են «կոչ», «խրատ», «պատգամ» իմաստները, որոնք առավել ընդգծված դրսևորում են ստանում:

- Անգլերենի և հայերենի հորդորական կառույցների զուգադրական վերլուծությունը ցույց տվեց, որ թեև գործառական առումով երկու լեզուներում էլ դրանք օժտված են հաղորդակցական ինքնատիպ միտումով՝ նպատակադրումով, այնուամենայնիվ ինչպես կառուցվածքային, այնպես էլ գործաբանական մակարդակում ի հայտ են բերում որոշ տարբերություններ: Ջուզամետ և տարամետ հատկանիշների հստակեցումը հայերենի համար բացահայտեց ինչպես քերականական, այնպես էլ հաղորդակցային մի շարք առանձնահատկություններ, որոնք, անշուշտ, ազգային մտածելակերպի և լեզվի ճկունության դրսևորումներ են:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում

1. Հորդորի կարգի հարցի շուրջ (անգլերենի և հայերենի հիման վրա) // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», N12, Երևան, ԵՊՀ հրատ. 2011թ., էջ 115-122, համահեղինակ՝ Ե.Մխիթարյան:
2. Բայազուրկ հորդորական կառույցներն անգլերենում // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», N13, Երևան, ԵՊՀ հրատ, 2012թ., էջ 40-51:
3. Հորդորի կարգի արտահայտման առանձնահատկություններն անգլերենում և հայերենում // Բանբեր «Երևանի Համալսարանի», «Բանասիրություն», N139.2, 2013թ., էջ 70-78:

ЕПИСКОПОСЯН ДАВИД РУБЕНОВИЧ

АКТУАЛИЗАЦИЯ СТРУКТУРНЫХ И ПРАГМАТИЧЕСКИХ СВОЙСТВ КАТЕГОРИИ ПОБУЖДЕНИЯ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ (в сопоставлении с армянским языком)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07 – «Германские языки»

Резюме

Диссертация посвящена структурному и прагматическому исследованию категории побуждения в английском языке (в сопоставлении с армянским).

Предложение как языковая единица выполняет функцию формулирования мысли, что в свою очередь обеспечивает речевое общение, где каждое предложение выполняет свою особую роль в процессе коммуникации. Так как в каждом предложении отражается отношение говорящего к действительности, то можно предположить, что средства выражения побудительности отражают в себе особенности не только характерные данному процессу, но и индивидуальное поведение участников коммуникации, что и дает повод предполагать, что побудительные предложения своими семантико-прагматическими свойствами тесно связаны с ситуацией речевой коммуникации.

Как известно, побудительные предложения как эффективные средства коммуникации находят применение в разных сферах человеческой деятельности, тем не менее они мало изучены, особенно с точки зрения семантики и прагматики. Этим и определяется **актуальность** темы данной диссертации.

Целью данного исследования является рассмотрение структурных и прагматических реализаций категории побуждения как в английском, так и в армянском языке. Для выполнения данной цели в работе выдвинуты следующие задачи:

- определить место категории побуждения в семантико-грамматической структуре языка;
- установить различительные черты между повелительными и побудительными предложениями;
- провести морфологический и синтаксический анализ побудительных предложений;
- изучить сферу альтернативных структур, выражающих побуждение;
- выявить имплицитные и эксплицитные способы выражения побуждения;
- провести прагматический анализ побудительных структур;

- исследовать типы побудительных структур, в которых отсутствует глагол, т.е. безглагольные побудительные предложения;
- провести сравнительный анализ побудительных структур в английском и в армянском языках как со структурно-семантической, так и коммуникативно-прагматической точки зрения;
- выделить конвергентные и дивергентные черты в способах реализации категории побуждения в обоих языках.

Научная новизна диссертации заключается в системном анализе категории побуждения, которая ранее в достаточной мере не рассматривалась как отдельная семантико-грамматическая категория, а также в сравнительном анализе категории побуждения в английском и армянском языках с выделением конвергентных и дивергентных черт. Новизна заключается еще в том, что предлагается выделить в сфере коммуникативных типов побудительное предложение как отдельный тип наряду с повелительными, вопросительными, повествовательными и восклицательными предложениями.

Теоретическое значение диссертации заключается в том, что категория побуждения как в английском, так и в армянском языке рассматривается как самостоятельная семантическая категория со всеми своими структурно-морфологическими и коммуникативно-прагматическими особенностями, тем самым расширяя границы грамматико-семантических категорий. Сравнительный анализ категории побуждения на основе английского и армянского языков обогащает сферу типологии новыми данными.

Практическое значение диссертации определяется тем, что результаты исследования могут использоваться в соответствующих разделах теоретической грамматики, а также в синтаксической семантике.

Методической основой исследования составляют основные положения функциональной и прагматической лингвистики, теория речевых актов, принцип вежливости, теория актуального членения. В диссертации использовались следующие методы: системный, контекстный, коммуникативный, сопоставительный и метод моделирования.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и библиографии.

Первая глава посвящена освещению категории побуждения, ее соотношению с грамматической категорией наклонения, выявлению особенностей выражения побуждения и повеления, а также установлению теоретических и практических способов выделения повелительных и побудительных предложений.

Во второй главе дается структурно-морфологическая и коммуникативно-прагматическая классификация побудительных предложений включая как основные (с помощью повелительного

наклонения), так и альтернативные виды побудительных предложений (вопросительные, повествовательные, в том числе предложения с модальными глаголами).

В третьей главе рассматриваются безглагольные побудительные структуры. Здесь дается структурно-морфологическая классификация безглагольных побудительных предложений с делением на однокомпонентные, двухкомпонентные, трехкомпонентные и многокомпонентные. В данной главе также указываются средства выражения центрального ядра: существительное, прилагательное, наречие, местоимение и числительное.

В четвертой главе дается сопоставительный анализ побудительных предложений в английском и армянском языках.. Рассматриваются как структурно-морфологические, так и коммуникативно-прагматические особенности различных способов выражения побуждения как в английском, так и в армянском языке, в результате чего выявлены их дивергентные и конвергентные черты.

В заключении даны основные выводы исследования.

**ACTUALIZATION OF STRUCTURAL AND PRAGMATIC PROPERTIES
OF THE CATEGORY OF INDUCEMENT IN ENGLISH
(with special reference to Armenian)**

Summary

The dissertation is the study of the structural and pragmatic aspects of the category of inducement in English as compared with Armenian. The sentence as a language unit performs a function of forming statement which make up a communication act. Each sentence reflects the speaker's attitude towards the reality he is part of. And here inducement is the very sphere of communication in which the speaker takes a most direct and active part.

Inductive sentences as effective means of communication manifest themselves in various spheres of human activity, but the fact is that their status in the system of the language is not presented with due attention. Viewed from this point the theme of the research is quite **vital**.

The aim of the research is the structural and semantic-pragmatic analysis of inductive sentences in English as compared with those in Armenian.

For this purpose we have set up a number of tasks before us:

- to define the place of the category of inducement in the semantic-grammatical system of the language;
- to draw a parallel between imperative and inductive sentences;
- to carry out morphological and syntactic analysis of inductive sentences;
- to study the sphere of alternative structures expressing inducement;
- to reveal the implicit and explicit means of expressing inducement;
- to carry out the pragmatic analysis of inductive structures;
- to investigate the verbless inductive sentences;
- to carry out the comparative analysis of inductive structures in English and Armenian both from the structural-semantic and communicative-pragmatic points of view;
- to underline the convergent and divergent characteristic features of expression of inductive sentences in both the languages.

The innovation of the thesis lies in multi-folded analysis of the category of inducement. A suggestion is made to acknowledge the concept of the inductive sentence as another communicative type of sentence alongside with imperative, interrogative, declarative and exclamatory sentences.

The theoretical value of the investigation consists in the multifold study of the category of inducement in English thus widening the scope of grammatical-semantic categories in the language. The comparative analysis of this category on the basis of the English and Armenian languages provides the branch of typology with new data.

Practical significance of the thesis is that the results of the investigation can be applied in the respective sections of theoretical grammar, pragmalinguistics as well as in typology.

Methodological ground of the investigation is based on the principles and fundamentals of functional and pragmatic linguistics, the theory of speech acts, the principle of politeness, the theory of actual division. The following methods are applied: systematic, contextual, communicative, comparative and the method of modelling.

The dissertation consists of introduction, four chapters, conclusion and bibliography.

Introduction defines the topicality of the theme of the investigation, presents the aims and objectives of the research as well as states the novelty, the theoretical and practical value of the research.

Chapter one gives a detailed review of category of inducement as it is presented in English and Armenian, its correlation with the category of mood. A borderline is established between imperative and inductive sentences.

Chapter two deals with the structural-morphological and communicative-pragmatic analysis of inductive sentences in English, including not only the main patterns (by means of the imperative mood), but also alternative forms (interrogative, declarative sentences as well as sentences with modals).

Chapter three examines verbless inductive structures in English. It gives the structural-morphological classification of these structures into one-component, two-component, three-component and multi-component. This chapter also provides the classification of the central part of the structure, which is expressed by a noun, adjective, adverb, pronoun and numeral.

Chapter four presents the comparative analysis of inductive sentences in English and Armenian, focusing on their convergent and divergent features in the way of expressing the category of inducement.

Conclusion presents the main findings of the research.